

թեամբ լեցուն աչքերը, լայն և խոհուն դիմագիծը, և հանդարտորէն հոսող խօսքերուն շարանը. միտք կու զայ մանաւանդ այն վերջին իրիկունը, շոգենաւին վրայ, երբ Անոր հոգին տրտում էր Յիսուսի հոգին պէս:

Հիմա, սենեակէս դուրս առուակը կը հոսի, և նիհար գեփիւո մը կը զգուէ ծառերուն հոգին. լեռները կը ծովին սենեակիս վրայ, և լիճը ժայռերուն դէմ կը պայքարի անհանդարա յուզումներով...:

Վարդապէտը ա'լ չկայ: Հոգւոյս վրայ կը զցուին երիտասարդ տարիքիս զուարթ խոհերէն ոմանք, և տառապալից քանի մը վիշտեր՝ հոգւոյս մէջ կը բազմին արբայական հպատութեամբ:

Տրտութիւն ունիմ, ց'աւ և տառապանք:

Հոկայական քայլերով սոտեր մը կը յառաջանայ դէպ' ինձ, և խո՛ր, խոր դիտելով այ քերէս ներս՝ յոգնած և վհատ շնչտով մը կը կրկնէ « ԶԻՍ ՄԻ՛ ՄՈՌՆԱՐ, ՏՊԱ՛Մ »:

Տրտութիւն ունիմ, ց'աւ և տառապանք:

ԱՐԱՄԱՑԻՄ ԱՐԱԳԵԱԿ

¤ ¤ ¤

ԳՈՒԽՑ ՍԸ ՇԱՌՈՒԿ ԵՒ ԶՈՅՆ Ս. Ա. ԲՅՈՒՆԻ

Հ. ԱՐՄԵՆ ՂԱԶԻԿԵՍՆԻ ԴԱԳԱՂԻՆ ՎՐԱՅ

Այս հեռաւոր ափունքէն՝ սրտի խորոնկ կոկիծով և հոգւոյ անսահման թախիծով իմացայ մահուանդ գոյցը:

Օրերով չկրցայ հաշտուիլ անողոք իրականութեան հետ և յուսացի տեսնել նորէն քեզ վիթ՝ խարի գրեթուով մէջ ընկլմած, հոգիր մէծ երգիչներու խորհրդաւոր նուազին ունկնդիմ, և միաբո՞ անցեալի փոշիներուն և մեծութեանց մէջ թափառյած...

Հն, ուր առաջին անգամ տեսայ քեզ – վանականի մենաւոր խցիկիդ մէջ – իմ վրաս զո՞ր ծեցիր մին այն գեղեցիկ տպաւորութիւններէն՝ զրոս երբեք կարելի չէ թաղել և որոնք մարդկային սրտին բարախինին հետ կ'իջնեն գերեզման:

Այն ատեն, յիսունեւեօթը գարուններով պտակուած ճակատո՞ վաստակաւորի յատուկ իրո՞ շոմներով բեռնաւոր՝ կարծես աւելի կ'երիտասարդանար երբ կը խօսէիր հայ լեզուի թարուն հա՞րսուութեանց շուրջ: Գիտէի թէ ինչ անսահման սէր և ինչ աննկուն կորով կապած էին քեզ զրա՞ կանութեան մոզական ուժելուն:

Հն, այդ խուցին չորս պատերուն մէջ՝ իմ պատանի մտքովս կը խորհէի՝ թէ մէծ Միթթա՞ բեաններու վայել հրաշքն է որ կը զործէիր և հիացում կը ներշնչէիր բոլոր գրեզ ճանչցողներուն, սի՞ րով ու խանդականքով կու զայինք բարեւել քեզ:

Տաճարին մէջ, որուն խորերէն երկու հարիւր տարիներէ ի վեր դէպ ի երկինք կ'երկարի՞ն աղօթասաց մրմունջները կուսակրօն քահանաններուն, կը լոէինք քու յորդ, բնական և անկեղծօրին զգածուած ձայնդ: Երբ շրթունքներդ կ'արոտաբերէին մեր հին տրտամանուշ շարականները՝ կարծին այնտեղ, խորանին առջեւ հանգչող Միթթար անհւները զիրենք պարփակող մարմարին՝ կը շարժէին, և մեր բոլոր ննջեցեալ ու հաճատակ եղբայրներու հոգիները կը խայտային:

Ոսկի սիրտդ՝ որ ողբաց և մանուկի պէս արտասուեց երբ « Հայկական մատենագիտութիւններով տոգորուած էր, և թէ որպան քաջաւերիչ և խրախուսիչ ժպիտ ունէիր այտերուդ վրայ՝ երբ կը նորահասներու առաջին ճիշերը:

Տակաւին աչքերու առջեւ է այն պարզ, այն քիչ մը անփոյթ, իր մեծութեան չափ պարզուն և համեստ պատկերը՝ որ քուկդ էր և զոր կը պտացնէիր մենաստանին նոնեղալար ճամբանին:

Ազուրյ, ուր միջոց մը կու գայիր ամրան ընթացքին՝ յոգնավաստակ մարփիդ և մարմնիդ հանք գիստ տալու, կը յիշեմ թէ ինչ խանդակատանքով շուրջդ կը հաւաքէիր վարժարանին սանիրին քուարթ, ժողովրդական, ծննդապայրիդ քաղցրահունչ բարբառով կը խօսէիր թէ ինչպէս զիրենի դիաւոր կ'ուզէիր ըլլաւ, մէկ ձեռքիդ մէջ՝ խաչը բռնած, միւսին մէջ՝ սուրը, այսուպէս զիրենի կրային զօրութեամբ չախչախելու համար բոլոր այն բիրու ուժերը՝ որոնք հայ ժողովրդակի կորովը կը սպանեն:

Մեր օրերու Ղեւնդ երէցն էիր կարծես՝ որով կ'ուզէիր հայ դեռատի սրտերու մէջ վառ պահե հայրենիքի սէրը; Արիւնդ էր որ կ'եռաւ երակներուդ մէջ, նորահաս երիտասարդի մամեհի իրո՞ դավառութիւնը կը ցոլար աչքերուդ, հոգւոյդ և մարփի մէջ՝ զոր կը յայտնէիր զրավէներուդ:

թիւ, և որուն կը պարտինք այն հոյակապ գործը՝ զոր աւանդ կը թողուս ապագայ սերունդներուն: Ան, գեռ կը յիշեմ, անցեալ աշնան՝ երբ գրական պալատի հրապարակէն մինչեւ շոգեմակը կը լոկերացայ քեզի, յոռետես յայտնութիւններ կ'ընէիր կեանփիդ նկատմամբ, չարաշուք՝ զգացումով կը վախնայիր թէ զործդ չաւարտած՝ յաւիտենապէս պիտի փակես աչքերդ:

Եւ հիմակ, ով սիրու արիւնող իրականութիւն, ես կ'ըլլամ միայն անիծեալ վկայ՝ այդ տիուր մարգարէութեան:

... Արդ կը հանգչիս պաշտելի կղգեակէդ հեռու, զոր բնաշխարհներդ չափ սիրեցիր և որուն

սեղաններուն առջեւ աչքերուդ և մարփիդ լոյսն սպառեցիր:

Ես կ'ուզէի, իբրեւ հայ պանդուտա, իմ հազարաւոր բախտակիցներուս պէս ու անոնց հետ՝ տեսնել քեզ Ա. Ղազարու անդորրաւէտ շիրմատան մէջ, Հիւմիւգի, Բագրատունիի, Ալիշանի և բոլոր ապազ կուսակրօն եղայրակիցներուդ շունչին մօտիկ: Ան շիրմատան մէջ՝ որ հայ իրականութեան մեծագոյն յուշարձաններէն մէկն է, և է ուժաւատեղի մեր բոլոր ժողովրդին՝ որուն մէն մի անգամն աւելի պիտի խայտած անձերուն գերեզմանն իր աչքերուդ իսկ տեսնէ:


Կ'ուզէի որ ափերուն զարնուող ալիքներու յաւիտենական նուա՛զն ըլլար խոնջ անհւներու օրու: Ու երբ իրիկնաղէմին տաճարին կոչնակը զօղանչէր, երկնայած հոգիդ սաւառնաթեւ իջնէր և այ շարականներու մելամազդիկ և տրտմանուշ ազգեցութեամբ բնանաւոր նորէն իր լուսաւոր օթեզավանը:

... Բայց պատիւ քեզի, ով վեհապանծ հոգի, որ զիտար որոշ տարիքի մէջ հրաժեշտ տալ աշխարհային բոլոր վայելքներուն, որ այս թշուառական և հիւանդ մարդկութեան մակերեսային խինդն ու յատակը տիղմ հե՛ռն արհամարհեցիր, և դո՛ւն՝ որ վերջապէս արշալոյսէն առաջ սկսելով մայրամուտէն յետոյ միայն բաժնուեցար սիրելի գրիբէդ, ինչպէս կը հաւաստեն եղայրակիցներդ, ապրէ՝ յաւէտ հոգւոյս մէջ՝ իբրեւ մին մեր հանգուցեալ կամ նահատակ այն բազէտաններդ, որոնք երկրային, նիւթական շահերը մերժելով՝ վալեցին հայ մշակոյթի փշալից զարգաներէն՝ որոնք երկրային, նիւթական շահերը մերժելով՝ վալեցին հայ մշակոյթի փշալից համար:

... Բայց պատիւ քեզի, ով վեհապանծ հոգի, որ զիտար որոշ տարիքի մէջ հրաժեշտ տալ աշխարհային բոլոր վայելքներուն, որ այս թշուառական և հիւանդ մարդկութեան մակերեսային խինդն ու յատակը տիղմ հե՛ռն արհամարհեցիր, և դո՛ւն՝ որ վերջապէս արշալոյսէն առաջ սկսելով մայրամուտէն յետոյ միայն բաժնուեցար սիրելի գրիբէդ, ինչպէս կը հաւաստեն եղայրակիցներդ, ապրէ՝ յաւէտ հոգւոյս մէջ՝ իբրեւ մին մեր հանգուցեալ կամ նահատակ այն բազէտաններդ, որոնք երկրային, նիւթական շահերը մերժելով՝ վալեցին հայ մշակոյթի փշալից համար:

Ու դագաղիդ վրայ, ծաղկեփունջի փոխան, ընդունէ՛ սա մէկ քանի տողերն՝ իբր նուէր աղամազ տղու մաղքա՛տ սրտին, և սա մէկ քանի արցունքները՝ զորս ան քեզի ապահովութիւնի ափերէ:

ՀՐԱՋ ՔԱԶԱՐԵԱՑ



ՈՒՂՂԵԼԻՔ

« Բազմալէպ » ի Մայիսի (1932) թիւ.

1) Էջ 220 « Մուրացիկներ » ու ութերորդ տան երրորդ տողը պիտի ըլլայ՝ « Մերթ անցորդին նայուածքներն կը ինդրեն հայ »:

2) Վերջին տան երկրորդ տողը՝ « Հասարակաց փոսն անկողին յաւերժական »:

ՑՈՒՑԻՒ-ՑՈՒՀԻՍ (1932) թիւ.

Էջ 317, ա սին, տող 26, և էջ 319, բ սին, տող 16, պիտի ըլլայ Մակար (Եկմալեան), Բնագրին այդ վերպակը՝ մեր աւ ուշաբութեանէն գրիպեր եր անցեալ անգամ: